

«Գողգոթայի խորհուրդը ոչ թե չարչարանքի աստվածացման, այլ չարչարանքի հանդեպ հաղթանակի մեջ է»:

Նիկոլայ Բերդյաև¹

ԱՌԵՐԵՍՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻՆ*

Թեև 2015 թվականը մեր քաղաքական օրակարգում ամրագրվել է որպես ազգային մեծագույն ողբերգության՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելից, բայց մինչ օրս փաստորեն անորոշ են մնում անցյալի ու ներկայի այդ մեծ առերեսման սպասումներից բխող անելիքներն ու ակնկալիքները:

Ինչ է մեզ խոստանում առաջիկա տարին իբրև 1915-ի դառը հիշողության և 2015-ի՝ բարդ իրողությունների հանդիպման պահ, և ինչպե՞ս է նոր աշխարհին ընկալելու մեր հին ողբերգությունը իր ներկա բարդ ու պայթյունավտանգ իրողությունների պայմաններում: Այս երկմիասնական գլուխկոտրուկի պարզաբանումից հետո հարկ է պատասխանել նաև երրորդ հարցին. 2015-ից հետո մեզ համար պատմություն² է դառնալու Հայոց ցեղասպանությունը, թե՞ հայերիս հաջորդ սերունդների հիշողության մեջ նույնպես շարունակելու է մնալ իբրև ապրված անցյալի հավերժ ներկայություն:

Մինչ օրս այդպես էլ անպատասխան մնացող այս առանցքային հարցերի վերաբերյալ մեր փորձագետների կանխատեսումներն արտացոլում են սոսկ լավատեսական կամ վատատեսական սպասումների տեսքով դրսևորվող ընթացիկ-քաղաքական ակնկալիքները: Ոմանք պնդում են, թե 2015 թվականը դառնալու է Հայոց ցեղասպանության վերջնական ճանաչման և դրա համար Թուրքիայի պատասխանատվության չափորոշիչների հստակեցման տարին. հակառակ կարծիքի կողմնակիցները չափազանց վատատես են՝ նկատի ունենալով Արևմուտք-Ռուսաստան հարաբերությունների բարդացման հետևանքով միջազգային ասպարեզում արձանագրվող նոր մարտահրավերները և դրանց դիմակայելու՝ Հայաստանի ու հայության հնարավորությունների նվազման իրողությունը:

Բայց, երբ այսօր փորձում ենք հաղթահարել այն իմացական փակուղիները, որոնց ներսում 2015 թվականի ապրիլի 24-ի նախօրեին տարուբերվում է հայ քաղաքական միտքը, չենք կարող ուրախությամբ չարձանագրել միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության փաստի ընկալման ու գնահատման ճանաչողական մակարդակի բարձրացումը և շա-

*Ընդունվել է տպագրության 25. 12. 2014:

¹ Николай Бердяев. Философия свободы. М., 1911, с. 204.

ՎԷՄ համահայկական հանդես 2 (ՃԲ) 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

հագրգիռ վերաբերմունքի ուժեղացումը: Ունանք սա բացատրում են Հայոց անկախ պետականության գոյության փաստով, որը 1990-ականների վերջերից միջազգային բեմերում բարձրացրել է Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, մյուսները ուշադրություն են դարձնում Սփյուռքի կողմից կատարված աշխատանքի վրա: Սակայն ավելի անկողմնակալ գնահատականը պահանջում է արձանագրել, որ վերջին տասնամյակներին այս երկու անհերքելի պատճառները, **միախառնվելով** աշխարհաքաղաքական որոշակի ազդակների հետ, **փոխակերպվել են** Հայոց ցեղասպանության փաստի՝ համաշխարհային ու տարածաշրջային քաղաքականության գործոնի վերածվելու իրողության: Իր ճանաչման որոշակի հանգրվանում Հայոց ցեղասպանության ընկալումը «ոճրի ու պատժի» շուրջ թուրք-հայկական բանավեճի դաշտից տեղափոխվել է ավելի բարդ և բազմամակարդակ հարաբերությունների հարթություն: Այսօր մեր խնդիրն ու մեր ցավը այլևս միայն մերը չէ, և նրա հետ առերեսումի անհրաժեշտությունը դարձել է ոչ այնքան մարդկության խղճի, որքան վերջինիս անունից գործող, բայց ոչ միշտ համարժեք վճիռներ կայացնող ուժի համաշխարհային կենտրոնների խնդիրը: Սա նոր իրողություն է՝ միջազգային կյանքի ու նրա ամենակարևոր զարկերակի՝ միջազգային քաղաքականության գլոբալացման հետևանքներից մեկը, որն իր խորքում և՛ նոր հնարավորություններ, և՛ նոր մարտահրավերներ է պարունակում: Դրանց մեծ մասը դեռևս գտնվում է **լատենտ** վիճակում, բայց 2015 թ. ապրիլին, երբ ոգեկոչվելու է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, այս իրողությունն անսպասելի գագաթն է տալու իրեն:

Իսկ սա նշանակում է, որ 2015 թվականը դառնալու է միանգամից երեք հարթությունների վրա Հայոց ցեղասպանության փաստին առերեսվելու հնարավորություն. **առաջինն** ու ամենաբարդը գտնվում է գլոբալ և տարածաշրջանային քաղաքականության շահերի ու հավակնությունների հատման տիրույթում, **երկրորդը**՝ Թուրքիայում և թուրք ժողովրդի ներսում, և **երրորդը**՝ Հայաստանի ու հայության ներազգային կյանքում: Ընդ որում՝ այս երեք հարթությունները բազմաթիվ տեսանելի ու անտեսանելի թելերով այնպես են «կապված» մեկը մյուսին, որ խոստանում են 2015-ի ապրիլի 24-ը վերածել **համաշխարհային նշանակություն** ունեցող իրադարձության՝ անկախ նրանից, որ միջազգային հանրության ապակողմնորոշմանն ուղղված Թուրքիայի հետևողական ջանքերը բազմապատիկ անգամ գերազանցում են Հայաստանի թույլ, իսկ հաճախ էլ՝ ձևական քայլերին:

Ստացվում է, որ թեև որպես ազգ անհրաժեշտ չափով չենք նախապատրաստվել մեր հիշողության ապարբազնացման (դեսակրալիզացիայի) վտանգին դիմակայելու գործին, իսկ որպես պետություն՝ ոչ միայն պատրաստ չենք, այլև **խուսափում ենք** միջազգային-իրավական գետնի վրա առաջադրել Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության խնդիրը, բայց առաջիկայում՝ տարածաշրջանում և աշխարհում ծավալվող առարկայական գործընթացների արդյունքում այդ կրկնակի բեռը դրվելու է մեր թույլ ուսերին:

Աշխարհն այսօր զգում է Հայոց ցեղասպանության փաստի հետ առերեսվելու կարիքը ոչ այնքան իր մարդասիրության և արդարության չափորոշիչների ամբողջացման և դրանցում պակասող՝ հայ ժողովրդի հանդեպ չհատուցված պարտքի գիտակցման, որքան 20-րդ դարի առաջին տասնամյակներին Հայոց ցեղասպանությամբ սկիզբ առած, Ռուսաստանի բոլշևիկյան հեղաշրջմամբ շարունակված և ի վերջո՝ Մոսկվա-Լոզան իրավապայմանագրային խախտուտ հիմքն վրա հաստատված՝ տարածաշրջանային իրողությունների

վերաքննության պահանջմունքի հատունացման հետևանքով:

Գլոբալ հարթության վրա վաղուց արդեն խարխլվել է ոչ միայն Առաջին աշխարհամարտի ընթացքում ծավալված խորքային դիմակայության երեք ազդակների՝ ծովային (Մեծ Բրիտանիա), մայրցամաքային (Ռուսաստան) և անկյունագծի (Գերմանիա) բախման արդյունքում Արևմտյան Հայաստանի ստատուս-քվոն պայմանավորած աշխարհաքաղաքական ենթահողը, այլև Երկրորդ աշխարհամարտին հետևած սառը պատերազմյան փակուղին: 1915-1918 թթ. հայազրկված Արևմտյան Հայաստանի դառնադետ ճակատագրի աշխարհաքաղաքական հիմնաքարը՝ Եվրոպայից մինչև Մերձավոր Արևելք ձգվող տարածաշրջանում երեք հզոր ազդակների բախման «փակ եռանկյունին»² և 1945-1953 թթ. Թուրքիայի նոր բաժանումը կանխած «սառը պատերազմի» երկանդամ դիմակայության բնորոշ պատմության գիրկն են անցել: Գերուժերի պայքարն այսօր ձեռք է բերել գլոբալ բնույթ, իսկ նրա նոր առանցքը (որտեղ արձանագրվելու են 21-րդ դարի ցեղասպանությունները), ուրվագծվում է ուժի համաշխարհային երկրորդ բևեռի ձևավորման գործընթացի իրական շարժիչը դարձած **Չինաստանին**³ արևմուտքից հարող տարածաշրջաններում: Ուստի դեպի Չինաստանի սահմանները շտապող Արևմուտքի ճանապարհին ոչ միայն Թուրքիան, այլև Ռուսաստանը երբեմնի մեծապետականության այն հնատձ «դոյակներն» են, որոնք արագացված տեմպերով ներքաշվում են «փլուզումների ու հողահարդարման» աշխատանքների մեջ:

Նման արագացումների ամկայության պայմաններում ժամանակի միջին տևողության կամ տնտեսական ցիկլի ազդեցությամբ⁴ աստիճանաբար ուժասպառվող «նոր լենինների» Ռուսաստանը դառնալու է Արևմուտքի **շարունակությունն** Արևելքում: Տեսանելի ապագայում մեր հայրենիքի մյուս հատվածի՝ Արևմտյան Հայաստանի ճակատագիրը ևս հայտնվելու է «նոր աթաթուրքերի» վերահսկողության դաշտից դուրս: 20-րդ դարասկզբին իրենց «մուրձի ու սալի» արանքում մեր ազգային իդեալների իրականացման մեծագույն փորձը՝ Հայաստանի առաջին հանրապետությունը խորտակած Ռուսաստանի ու Թուրքիայի «շոշափուկներն» անպայման հեռանալու են մեկը մյուսից և մեր **Մայր երկիրն** ու Հայաստանի Հանրապետությունը առերեսվելու են իրար:

Այս մեծ առերեսումն, անշուշտ, 2015-ին չի լինելու, սակայն նման կանխատեսումը ոչ թե բարի ցանկություն է, այլ գլոբալ դիմակայությունը դեպի Արևելք տեղափոխվելու գործընթացից բխող **պատմական անհրաժեշտության** գիտակցում: Ուրեմն՝ Հայկական լեռնաշխարհն ընդգրկող պետություն ստեղծելու պատմական հնարավորությունը, որը բացակայում էր 20-րդ դարի առաջին կեսին, շուտով բախելու է մեր և **ոչ միայն մեր** դռները...

Ասվածի համատեքստում ակնհայտ է, որ Թուրքիայի համար Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը խոստանում է դառնալ հայկական ու նաև քրդական «ձակատներում» սպասվող դառն առերեսումների տարի: Դրանցից խուսափելու համար մինչև 2015 թվականի ապրիլի 24-ը Անկարան որդեգրել է **Ծիծեռնակաբերդը՝ Դարդանելի պատերազմով** «փակելու»

2 Արևմտահայության համար կործանարար այդ «փակ եռանկյունու» քարտեզային իրողությունները պատկերված են **Արթուր Գիքսի** «Քաղաքական աշխարհագրություն» գրքում: Այդ քարտեզներն ու նրանց գիտական վերլուծությունը տես **Րոբերտ Տոյկերս**, Теоретическая панорама геополитики, "Элементы" евразийское обозрение, М., 1992, N 1, с. 4.

3 Հայոց ցեղասպանության փաստի հանդեպ Չինաստանի քաղաքական դիրքորոշումների վերլուծությանը կարելի է ծանոթանալ «ՎԷՆ»-ի հաջորդ համարում լույս տեսնող՝ **Մնացական Ա. Սաֆարյանի** հոդվածում: Խմբ.:

4 Տես «ՎԷՆ»-ի ներկա համարում լույս տեսած՝ **Ատոմ Շ. Մարգարյանի** «Եվրասիական տնտեսական այլընտրանքը...» ուսումնասիրություն-կանխատեսումը: Խմբ.:

մարտավարությունը, ինչը 1915–1916 թթ. Հալիպոլիի ճակատամարտում իր արձանագրած «հաղթանակի» իրական խորհուրդն անտեսելու անհաջող փորձ է: Օսմանյան կայսրությունը ոչ թե ռազմական հաղթանակ է տարել այդ գործողության արդյունքում, այլ պարզապես օգտվել է Եվրոպայից մինչև Մերձավոր Արևելք ձգվող տարածաշրջանում երեք հզոր ազդակների բախման «փակ եռանկյունու» ներսում սրված անգլո-ռուսական հակասություններից, որոնք ստիպեցին անգլիացիներին հետ քաշվել Կ. Պոլսի մատույցներից: Եվ եթե թուրքերը մինչ օրս չեն հասկացել այդ իրողությունը կամ փորձում են քողարկել այն, ապա շուտով ստիպված կլինեն բախվել շատ ավելի բարդ մարտահրավերների, որոնք կհարկադրեն նրանց դիմելու 2009 թվականի հայ-թուրքական արձանագրություններից ավելի արմատական նախաձեռնությունների՝ Արևմտյան Հայաստանի շուրջ հայ-քրդական հակասությունների խաղարկման իրենց «հին ճոճանակն» օր առաջ վերականգնելու համար:

2015-ին՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակի տարում, Հայաստանի Հանրապետությանը սպասող այս նոր հնարավորությունների ու մարտահրավերների բարդ խճանկարը չի կարող իր անդրադարձը չունենալ Հայաստանի ու հայության ներազգային կյանքում: Մի կողմից՝ արտաքին մարտահրավերների **մեծացման**, իսկ մյուս կողմից՝ երկրում առկա խորհրդային պետաքաղաքական համակարգի **վերապրուկին** համակած փտախտի խորացման արդյունքում 2015-ին հայաստանյան հասարակությունը կամա թե ակամա դուրս է գալու ազգային հիշողությունից զրկված **ամբոխի** կամ **օխոսի** վիճակից:

Պատճառն ակնհայտ է. թեև ամբոխի՝ որպես «հեղինակություններով դատող մարդկանց» (Վ. Բելինսկի) աշխարհընկալումը ժամանակավորապես մթազնել է հայաստանցիների մեծամասնության հիշողությունը, բայց չի կարողացել յուրացնել ու սեփականել ազգային արժեքների համակարգը: Իսկ **ժողովուրդը** ամբոխից տարբերվում է նրանով, որ որոշակի արժեքների կրող է, առանց որի անհնար է պատկերացնել նրա հետագա գոյությունը՝ որպես ամբողջություն: Ուստի Հայաստանում վերահաստատված խորհրդային պետաքաղաքական համակարգի կողմից մեր ազգային արժեքները սեփականելու փորձերի «գագաթնակետը»՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը զգայացունց արարողությունների և իմաստագուրկ «գիտաշուրճների» վերածելու մտադրությունը, ազգային հիշողության խորքում արժեքներ պահպանող հայ ժողովրդին նետված մեծագույն **մարտահրավեր է**:

Երբ Հայաստանում անթաքույց կերպով պատրաստվում են եղեռնի գոհերի հիշատակը մի խումբ պաշտոնյաների, դիզայներների, շինարարների ու հրատարակիչների միջոցով վերածել ամենատվորական թատերականացման, 2015-ի ապրիլյան օրերին հայ ժողովրդի հայաստանյան հատվածը չի կարող չառերեսվել հարազատ երկրում իր գոյության նյութական պայմանների և հոգևոր միջավայրի հետևողական ոչնչացման ու քայքայման նախկին ու ներկա գործընթացների **ժառանգորդականության** փաստին: Առաջիկայում անխուսափելի է մեր հանրության առերեսումը՝ Հայաստանում հայ ժողովրդի **շարունակականությանը** սպառնացող այդ մեծագույն վտանգի հետ: Քանզի 2015-ի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդ բարձրացող յուրաքանչյուր հայի գլխին դոմոկլյան սրի նման կախվելու է՝ «միթե սրան է արժանի կորուսյալ հայրենիք ունեցող ժողովուրդը» ցավագին հարցը: Որովհետև առարկայորեն լուսարձակվելու է անցած տարիներին Հայաստանից տեղի ունեցած կործանարար արտագաղթի և երկրի անկախության սահ-

մանափականան գործընթացի խորքային կապը:

Հայոց չարչարանքները սկսվել են այն պահից, երբ կորցրել ենք հավատը անկախ ապրելու հնարավորության հանդեպ, որից էլ սկիզբ է առել հուսալքությունն ու արտագաղթը: Ուրեմն մեր չարչարանքների համար իրավունք և արդարություն պահանջելու խնդրի սկզբունքային լուծումը հնարավոր է միայն չարչարանքի՝ որպես համամարդկային երևույթի հանդեպ հաղթանակ արձանագրելու պարագայում, քանզի **սուգը հավերժ է, երբ չկա պայթյալ:**

Առ այդ՝ երբ առարկայական գործընթացների թելադրանքով մեր աչքերի առջև սկսում են խարխլվել ռուս-թուրքական «մուրճ ու սալի» շոշափուկները, երբ անխուսափելի աշխարհաքաղաքական տեղաշարժերը տեսանելի են դարձնում մեր 100-ամյա կապանքների հաղթահարման «հուսո դժները», հայոց տառապյալ հոգին 2015-ին պետք է առերեսվի **գլխավոր ճշմարտությանը:**

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացի ամուր հիմքերը կդրվեն այն պահին, երբ 2015 թվականը՝ առերեսումների տարին, հայ ժողովրդի համար կդառնա Մեծ եղեռնին հետևած բարոյաքաղաքական չարչարանքների հանդեպ հաղթանակի տարի: Իսկ նման հաղթանակը հնարավոր է միայն մեկ առանցքային պայմանի իրացման պարագայում. մեկդարյա քաղաքական խարխափումների ընթացքում պտույտներ գործելով «արևմտահայության Եղեռն-Հայաստանի անկախություն-անկախության կորուստ-նոր ցեղասպանություն (Ադրբեջանում)» նոր անկախություն» փակ շրջանակի մեջ՝ վերջապես պարտավոր ենք կանգ առնել ու եզրակացնել. ներկա գլոբալացող աշխարհում, **ի՛նչ էլ որ լինի**, իրավունք չունենք սակարկության տակ դնելու համաշխարհային քաղաքականության լիարժեք սուբյեկտի՝ անկախ Հայաստանի միջազգային-իրավական կարգավիճակը: Դա ոչ միայն Հայաստանի Հանրապետության հետագա գոյության պահպանման, այլև Արևմտյան Հայաստանի վերադարձի հնարավորության իրացման միակ տարբերակն է:

Դա նաև 100 տարի առաջ **անկախ Հայաստան** երազելով նահատակության պսակն ընդունած սերնդի պատգամն է՝ անցյալի դառնադեմ հիշողության մեջ տառապող ներկա սերնդին: Ուրեմն 2015-ին՝ **առերեսումների տարում** մեզանից դուրս հրաշքներ սպասելուց առաջ և սպասելու համար պարտավոր ենք մեր հոգուց **մեկընդմիջ** վտարել օտարին ապավինող կամագուրկ ամբոխի անլիարժեքության բարդույթը՝ սկիզբ դնելով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրական գործընթացին:

Խմբ.:

THE YEAR OF CONFRONTATIONS

ГОД ОЧНЫХ СТАВОК